



Ագդարաբույժեան Trumpet's Sound **փող**

52-րդ ՏԱՐԻ, ԱԽՏՐԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 2021



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



ARMENIAN CHRISTIAN MISSION

Բովանդակութիւն

Ինչ որ բան պակաս է **3**

Հովիւ Հրաչ Գույումեան

Սաղմոսներու եռաբանութիւն (2) **4**

Տոն Սրորմըր

Կանոններ եւ յարաբերութիւններ **7**

Նէյլ Պուրման

Եղիայի աղօթքները (2) **10**

Ռէքս Տիրլավ

Լսող Աստուածը **13**

Քաղուածք

Բարի Հովիւր **15**

Հովիւ Հրաչ Գույումեան

Կազմի նկարը՝ Օգոստոս 2007թ.:

- Շնորհակալութիւն կը յայտնենք մեր Հօրը Իր բոլոր բարութեան համար:
- Շնորհակալութիւն կը յայտնենք մեր երկրի եւ մեր ժողովուրդի հանդէպ Իր ցուցաբերած ողորմութեան և բարութեան համար:
- Աղօթեցէ՛ք անոնց համար, ովքեր աղքատներուն եւ կոտորուած սրտերուն հոգ կը տանին:
- Աղօթեցէ՛ք, որ Աստուած օրինէ այրիներուն ու որբերուն:
- Աղօթեցէ՛ք հիւանդներու եւ վիրաւորներու ապաքինման համար:
- Աղօթեցէ՛ք ACM-ի աշխատակիցներու եւ ծառայութեան օրհնութեան համար:
- Աղօթեցէ՛ք Յուլիս ամսին ԱՄՆ-էն Հայաստան այցելող միսիոնարական խումբի օրհնութեան համար:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Ինչ որ բան պակաս է

Այսօր աշխարհին նայելով կը հասկնանք, որ ինչ որ բան պակաս է, բայց շատերը չեն գիտեր, թե ինչ է այդ: Արդեօ՞ք այս իրավիճակի պատճառը համաճարակն էր, թե՞ քանի որ տեղ մը կորսնցուցինք մեր խաղաղությունը: Ո՛չ, մենք կորսնցուցինք մեր սերը, կորսնցուցինք Աստուծոյ հանդէպ մեր սերը:

Շատ երգիչներ գեղեցկօրէն կ'երգեն սիրոյ մասին, բայց արդեօ՞ք իսկապէս կը ճանչնան սերը: Ո՞րն է սիրոյ աղբիւրը, ո՞վ կուտայ այն:

Աստուածաշունչը միակ Գիրքն է, որ յստակ կերպով կը սորվեցնէ այս. Աստուած սէր է: Աստուած պարզապէս սիրող չէ, Իր ամբողջ էութեամբ սէր է: Ան ամբողջութեամբ եւ կատարեալ կերպով կը սիրէ: Սէրը Աստուծմէ է: Ան է աղբիւրը, սէրը Աստուծոյ սրտէն կը բխէ: Մենք ուրիշ որեւէ բան կամ անձ փնտռելու կարիք չունինք: Ան է, ով մեզ սիրեց, երբ դեռ մենք մեղաւոր էինք, Ան է, ով ուղարկեց Իր Որդին՝ մեր փրկութեան համար մեռնելու:

Աստուած՝ երբեւէ ամենահզօր էակը, տիեզերքը ստեղծողը, Անձամբ կը սիրէ ձեզ: Փորձէ՛ք խորապէս մտածել ասոր մասին: Ան կը սիրէ ձեզ, ոչ միայն ընդհանուր առմամբ բոլոր մարդկանց կը սիրէ, այլ՝ անձամբ ձեզ: Ան հոգ կը տանի ձեր կեանքի մասին եւ կ'ուզէ դառնալ անոր մէկ մասը: Նոյնիսկ եթէ ձեր ամբողջ կեանքին մէջ խուսափած էք Աստուծմէ կամ այնպիսի բաներ ըրած էք, որոնց համար կը զոջաք, Ան տակաւին կը սիրէ ձեզ եւ կ'ուզէ ձեզի հետ յարաբերութիւն ունենալ:

Աստուծոյ սէրը անպայմանական եւ անսահման է. այն շատ աւելին է, քան ամենաընդունակ մարդկանց սէրը: Աստուած Իր հետեւողներուն կը պատուիրէ սիրել միմեանց:

Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը

«Ո՛վ Աստուած, ի՞նչ գերազանց է քու գթութիւնդ: Մարդոց որդիները քու թներուդ հովանաւորութեանը կ'ապաւինին» (Մաթ. 36:7):

«Ուստի հիմա կը մնայ՝ հաւատք, յոյս, սէր: Այս երեքը ու ասոնց մեծագոյնը սերն է» (Ա Կորնթ. 13:13):

«Սիրելիներ, մեկզմեկ սիրենք, վասն զի սերը Աստուծոմէ է: Ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծոմէ ծնած է ու կը ճանչնայ Աստուած» (Ա Յովհ. 4:7):

«Քրիստոսին հետ խաչը ելայ եւ ալ կենդանի եմ ո՛չ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս. բայց ես որ հիմա մարմնովս կ'ապրիմ՝ Աստուծոյ Որդիին հաւատքովը կ'ապրիմ, որ զիս սիրեց ու իր անձը ինծի համար մատնեց» (Գաղ. 2:20):

Ինչպէ՞ս ստանամ այս սերը: Ապաշխարութեամբ եկո՛ւր Տէր Յիսուսի քով եւ խնդէ՛ Իրեն լեցնել քու սիրտդ Իր սիրով: Սէրը կը վանէ վախը մեր սրտերէն ու կը վերականգնէ մեզ Յիսուսի մէջ:

Մի՛ շփոթուիք մտածելով, թէ ինչը կը պակսի ձեզ: Գիտակցե՛ք, որ Տէր Յիսուսի կարիքն ունիք ձեր կեանքին մէջ:

Հ. Գ.

Սաղմոսներու եռաբանութիւն (2)

Սաղմոս 23. հովիւի սաղմոսը

Այս սաղմոսի հանգամանքները բոլորովին կը տարբերին 22-րդ սաղմոսի սոսկալի հանգամանքներէն: Այստեղ չենք կարդար իր թշնամիներէն հալածուած մարդու մը մասին, այլ՝ մէկու մը մասին, ով կը մտածէ, թէ ինչպէս Տէրը քնքշօրէն հոգ կը տանի իրեն: Սաղմոսերգուն խնամուած է այնպէս, ինչպէս հովիւը կը խնամէ իր ոչխարներուն:

Դաւիթը կը սկսի այն վստահութեամբ, որ Տէրն իր հովին է: Լաւ է մեզ համար, եթէ կարողանանք ըսել. «Տէրը իմ Հովիւս է»: Մեզ պէտք է մէկը, ով ունակ է կեանքի իւրաքանչիւր իրավիճակին մէջ հոգ տանելու մեր մասին: Եթէ Տէրը մեր Հովին է, մենք բանի մը կարօտութիւն չենք ունենար: Ան կը տրամադրէ մեզ այն ամէնը, ինչ անհրաժեշտ է կեանքի եւ բարեպաշտութեան համար:

Հովիւը ոչխարներուն խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ: Բայց ինչպէ՞ս կրնանք ոչխարին պառկեցնել: Ոչխարները կը պառկին

միայն այն ժամանակ, երբ լիովին խաղաղ ու ապահով կը զգան: Հօտը ոչ միայն պետք է լաւ կերակրուի, այլ արտաքին սպառնալիքներէն եւ առողջութեանը վտանգող հիւանդութիւններէն զերծ մնայ:

Հովիւը նաեւ հանդարտ ջուրերուն քով կ'առաջնորդէ: Ոչխարները հորդացող գետէն ջուր չեն խմէր, ուստի հոգատար հովիւը կ'ապահովէ հօտի պատշաճ խնամքը: Մեր Հովիւը կը վերականգնէ մեր հոգիները եւ կ'առաջնորդէ մեզ արդարութեան ուղիներով: Ան մեզ կը տանի միայն այն վայրերը, որոնք լաւ են մեզ համար:

Քանի որ Հովիւը մեզ հետ է, մենք ոչ մէկ բանէ չենք վախճար: Նոյնիսկ մահուան շուքի ձորին մէջ, Ան այնտեղ է: Եւ մենք մեզի կը յիշեցնենք, որ քրիստոնեաներու համար մահը խաւար ձոր չէ: Այն մահուան շուքի ձորն է. եթէ շուք կայ, ուրեմն նաեւ լոյս պետք է ըլլայ, որ պէսզի այդ շուքը ձեւաւորուի:

Հովիւը կը պաշտպանէ եւ կը խնամէ իր գաւազանով ու ցուպով: Արեւելեան հովիւը իր գաւազանը կ'օգտագործէ ոչխարներուն վրայ յարձակելու փորձ ընող թշնամիներէն: Ան իր ցուպը կ'օգտագործէ, որ պէսզի փրկէ դժուարութեան մէջ յայտնուող ոչխարներուն եւ այսպիսով անոնց մխիթարութիւն տայ:

Մենք ապահովուած ենք մեզ համար անհրաժեշտ ամէն ինչով: Նոյնիսկ մեր թշնամիներու ներկայութեամբ մենք ապահովուած ենք անհրաժեշտ ամէն ինչով: Մեր գլուխը իղով օծուած է եւ մեր բաժակը խիստ լեցուն է:

Սաղմոսերգուն ապագային վստահութեամբ կը նայի, քանի որ գիտէ թէ բարութիւնն ու ողորմութիւնը իրեն պիտի հետեւին իր կեանքի բոլոր օրերուն մէջ ու շատ օրեր Տիրոջ տան մէջ պիտի բնակի: Թափառական վիճակները վերջ պիտի գտնեն ու վերջապէս մեր տունը պիտի հասնինք:

Մեզ համար շատ կարեւոր հարց մը կայ. արդեօ՞ք կը ճանչնաք այս Հովիւին, արդեօ՞ք անձնական կապ ունիք Անոր հետ, ով կեանքի իրաքանջիւր իրավիճակին մէջ ունակ է մեզ համար հոգ տանելու:

Սաղմոս 24. Գերիշխանի սաղմոսը

Սաղմոսի տրամադրութիւնը կրկին այլ է. ահա յաղթանակի ձայնը:

Աստուած յաղթական է բոլորի նկատմամբ: Երկիրն ու անոր մէջ եղած ամէն ինչ, ինչպէս նաեւ անոր բնակիչները Իրեն կը պատկանին: Դաւիթը կը մտածէ Աստուծոյ ստեղծած աշխարհի մասին եւ կը խոստովանի Արարչի մեծութիւնը:

Արարչի մեծութեան մասին մտածելը կը յանգեցնէ այն հարցին, թէ ո՞վ կրնայ կենալ Անոր առջեւ: Ո՞վ կրնայ մօտենալ նման Սուրբին:

Ո՞վ կրնայ բարձրանալ այնտեղ, ուր Տէրն է կամ կենալ Անոր սուրբ տեղը: Ո՞վ կը համարձակի այս վեհ Աստուծոյ մօտենալ: Դաւիթը չորս յատկութիւններ կը թուարկէ.

- Մաքուր ձեռքեր ունեցողը. անոր գործերը շիտակ են: Կը յիշենք Յովսէփի եղբայրները, ովքեր միասին գործեցին Յովսէփէն ազատելու համար: Տարիներ անց իրենց գործը գտաւ իրենց:
- Մաքուր սիրտ ունեցողը. անոր շարժառիթները կասկածի տակ չեն դրուիր: Միշտ չէր, որ Դաւիթի շարժառիթները մաքուր էին: Երբ իր մեղքը թաքցնելու ոչ մի ճար չկար, ան ծրագրեց Ուրիայի սպանութիւնը:
- Կուռքերին չերկրպագողը. ան միայն Տէր Աստուծոյ կը պաշտէ: Իսրայէլցիներու Եգիպտոսի ստրկութիւնէն ազատելէ անմիջապէս յետոյ կռապաշտութեան դիմելը ցոյց տուաւ, որ անոնց սիրտը Աստուծոյ հետ ուղիղ չէր:
- Ճշմարտութիւնն ըսողը. ան սուտ երդում չի ըներ եւ իր մէջ կեղծաւորութիւն չկայ: Կը յիշենք Յակոբին ով օրհնութիւն ստանալու համար խաբեց իր հօրը: Բայց Աստուած փոխեց Յակոբին: Կրնանք յիշել Դաւիթին, ով Աքիմէլէք քահանային խաբեց ըսելով, թէ թագաւորի շտապ գործով զբաղուած է, այն ինչ իրականութեան մէջ իր կեանքի համար կը փախչէր:

Դաւիթը կը նշէ թէ ասոնք են այն մարդիկ, ովքեր կը ստանան Տիրոջ օրհնութիւնն ու արդարութիւնը: Անոնք մարդիկ են, ովքեր Տիրոջ երեսը կը փնտռեն:

Յաղթական մուտքը

Անգամ մը Տէրը աւանակի վրայ նստած մտաւ Իր քաղաքի դար-

պասներեն ներս: Այստեղ սաղմոսերգուն աւելի մեծ մուտքի մասին կը խորհի:

Սովորաբար անձն իր գլուխը կը խոնարհեցնէ փառաւոր մարդու ներկայութեամբ, բայց այստեղ դարպասները պէտք է իրենց գլուխը բարձր պահեն: Թագաւորը ներս կը մտնէ. ո՞վ է այս Թագաւորը:

- Ան փառաց Թագաւորն է: Երկրի վրայ Ան ծածկեց Իր փառքը, բացառութեամբ անոնց, որոնց հաւատքով ընդունեցին, որ Ինքն է Մեսիան:
- Ան հզօր Տէր է: Ան ամենակարող է, որու առջեւ իւրաքանչիւր ծունկ պիտի խոնարհի: Ոչ ոք պիտի չկրնայ Իրեն դիմադրել:
- Ան պատերազմի մէջ հզօր Տէր է: Տէր Յիսուսը խաչի վրայ պատերազմի մէջ մտաւ ու ջախջախեց անոր, ով մարդկանց մահուան վախի գերութեան մէջ կը պահէր:
- Ան Զօրաց Տէրն է: Ան Իր տրամադրութեան տակ այնպիսի գօրք ունի, որու համբանքը հնարաւոր չէ: Ան տիեզերքի ղեկավարն է:

Թագաւորի մեծութեան մասին խորհելով պարզապէս բան չի մնար մեզի ընելու բացի այն, որ երկրպագութեամբ խոնարհինք Անոր առջեւ, Ով շնորհեց մեզ Իր սուրբ լեռը բարձրանալու արտօնութիւնը:

Թոյլ կուտա՞ք կրկին հարցնել. Թագաւոր Թագաւորացին հնազա՞նդ էք:

Տոն Սթորմըր

Կանոններ եւ յարաբերութիւններ

Որոշ քրիստոնեաներու համար հոգեւոր կեանքը ոչ այլ ինչ է քան կանոններու պահպանումը: Անոնք կը խորհին, թէ բարոյական կեանքով ապրիլը բաւարար է, ուստի իրենք իրենց համար որոշ կանոններ կը սահմանեն, որոնք առանց խնդրի ու դժուարութեան կը փորձեն պահպանել: Անոնք ոգելից խմիչք չեն օգտագործել, չեն ծխէր,

երդում չեն ընէր եւ զգոյշ են գումարի նկատմամբ. զգոյշ են այն վաստակելու եւ պահպանելու նկատմամբ: Սակայն այդպիսի կեանքի մէջ երկու բան կը պակսի. առաջին՝ զուտ բարոյական կեանքը հոգեւոր կեանք չէ, եւ երկրորդ՝ անոնք Տիրոջ հետ յարաբերութիւն չունին, այլ միայն կանոններ կը պահպանեն: Իւրաքանչիւր անձ պէտք է կարողանայ տեսնել, որ այդպիսի կեանքը ոչ այլ ինչ է, քան մեր բարձր կոչման աղքատիկ ու մահացու նմանակումը: Կանոնները երբեք չեն կրնար փոխարինել յարաբերութիւններուն:

Այնուամենայնիւ մենք գիտենք, որ անձնական կարգապահութիւնը շատ օգտակար է քրիստոնեայի համար, եւ այն անպայմանօրէն որոշ կանոններու պահպանում կը պահանջէ: Ասոնք կրնան դրական կամ բացասական ըլլալ. «Ես այս բանը պիտի ընեմ» կամ «Ես այս բանը պիտի չ'ընեմ»: Այնուամենայնիւ ասոնք կանոններ են, եւ միայն ատոնց վրայ կեդրոնանալը մեծ վտանգ կը սպարունակէ իր մէջ:

Վտանգն այն է, որ դուք կը սկսիք մտածել, որ Աստուծոյ հետ ձեր ունեցած խաղաղութեան հիմքը ոչ թէ Տէր Յիսուսի միջոցով է, այլ ձեր պահպանած կանոններու միջոցով: Եթէ բարիք գործէք, ուրեմն օրինուած էք ու Աստուծոյ առջեւ ուղիղ էք, բայց եթէ քիչ մը սայթաքիք կամ հանգստանաք, ուրեմն ձեր խաղաղութիւնը կը վերանայ: Երբ այսպէս կը մտածէք, իւրաքանչիւր կարգապահութիւն ծանր կը թուայ ձեզի համար, իսկ Աստուած՝ որպէս անկարեկից ղեկավար, եւ ոչ թէ Երկնաւոր Հայր:

Ուստի, այս սխալէն զերծ մնալու համար մենք պէտք է գրեթէ մոլեռանդօրէն կառչենք Քրիստոսի փառահեղ Աւետարանէն, որտեղ նշուած է որ մեր արժանիքները արժէք չունին, եւ որ Իր զոհաբերութիւնն է ամենակարեւորը: Միայն այդ զոհաբերութեամբ կրնանք հաշտուիլ Աստուծոյ հետ: Այն երբեք մեր արժանիքով կամ առաքիւնութեամբ ձեռք չի բերուիր: Ամբողջական, կատարեալ եւ յաւիտենական հաշտեցումը կատարուեցաւ Անոր խաչի արեան եւ հրաշափառ յարութեան զօրութեան միջոցով: Մենք հաւատքի միջոցով Իր հետ մեր ունեցած յարաբերութեան շնորհիւ է, որ ապահով հիմք ու լիակատար փրկութիւն ունինք:

Ուրեմն ինչո՞ւ ընդհանրապէս անձնական կարգապահութեամբ զբաղուիլ: Քանի որ մեր փրկութիւնը աւարտած չէ. մենք անհամբեր

կը սպասենք մարմնի խոստացուած յարութեանը, երբ Տէրը վերադառնայ: Միեւնոյն ժամանակ մենք երեք թշնամիներ ունինք, որոնց հետ պէտք է պայքարենք՝ աշխարհը, որը կը շարունակէ Քրիստոսին մերժել, սատանան, որը կը փորձէ կործանել Անոր աշխատանքը, եւ մեր սեփական մեղաւոր բնութիւնը, որը կը նախընտրէ աստուած ըլլալ, քան երկրպագել Աստուծոյ: Անձնական կարգապահութիւնը պարզապէս ընթացիկ հոսանքին հակառակ լողալ կը նշանակէ. այն անհրաժեշտ է սորվելու, աճելու եւ Տիրոջը ծառայելու համար: Ոչ որ չի կրնար հոգեւոր կեանք ապրիլ առանց այս կարգապահութեան: Պօղոսը Տիմոթէոսին ուղղուած իր նամակին մէջ կը խօսի մարգիկներու եւ զինուորներու մասին: Այդ ժամանակուայ հաւատացեալները լաւ հասկցած էին կարգապահութեան արժէքը:

Այնուամենայնիւ, կը մնայ մէկ կարեւոր հարց. Ինչպիսի՞ն է հոգեւոր կեանքը:

Տէր Յիսուսը հոգեւոր կեանքով ապրողի կատարեալ օրինակն է: Եթէ ձեզ ըսեն, որ վարքի որոշակի տեսակը Հոգիէն է, ուրեմն պարզապէս դուք ձեզի հարցուցէք, թէ արդեօ՞ք Յիսուսը նման վարք կը դրսեւորէր: Սուրբ Գիրքը յստակ կ'ըսէ. «Ան որ կ'ըսէ թէ «Անոր մէջ կը բնակի», այնպէս պէտք է քալէ՝ ինչպէս անիկա քալեց» (Ա Յովի. 2:6):

Արդեօ՞ք հոգեւոր անձը ինքն իրեն շատ սուրբ եւ մաքուր կը զգայ: Ո՛չ, ի տարբերութիւն Տիրոջը, մենք ապականած եւ մեղաւոր բնոյթ ունինք, որու հետ ամէն օր պէտք է գործ ունենանք, որպէսզի մեղքը «չթագաւորէ ձեր մահկանացու մարմնին վրայ» (Հռովմ. 6:12): Մինչ կը շարունակէք Հոգիով քալել սորվիլ, դուք աւելիով կը գիտակցիք ձեր ապականութեան մասին: Այնուամենայնիւ դուք կը սորվիք ազատուիլ անոր ազդեցութիւնէն, այնպէս որ կը սկսիք սիրել աւելի ազատ եւ աւելի անձնուրաց: Մարդիկ ձեր կեանքին մէջ աւելի շատ Քրիստոսին կը տեսնեն, բայց դուք ընդհանրապէս չէք զգար, որ Քրիստոսանման էք: Այնուամենայնիւ կը ճաշակէք Անոր խաղաղութիւնը եւ աւելի ու աւելի կ'ուրախանաք Իրմով: Չեր բաժակը խիստ կը լեցուի, բարեբարութիւնն ու ողորմութիւնը ձեզի հետ պիտի գան ձեր կեանքի բոլոր օրերուն մէջ ու շատ օրեր Տիրոջը տունը պիտի բնակիք:

Նէյլ Պութման

Եղիայի աղօթքները (2)

Գ Թագ. 16-18

Արդեօք տեսա՞ք, թէ Եղիան ինչ ըրաւ, որպէսզի պատասխանուի իր աղօթքը:

1. Խոստովանեց յայտնի մեղքը

Ան խոստովանեց երկրի մէջ Բահաղի երկրպագութեան մեղքը: Ան սպանել տուաւ Բահաղի մարգարէներուն ու մարդկանց ապաշխարութեան առաջնորդեց:

2. Անոր աղօթքը Աստուծոյ Խօսքի համաձայն էր

Ուշադրութիւն դարձուցէք, որ Եղիան գիտեր Աստուծոյ Խօսքը եւ գիտեր, թէ ինչն է երաշտի պատճառը (Բ Օր. 11): Եթէ մարդիկ Աստուծոյ հաճելի կեանքով ապրին, ապա անձրեւ կուգար:

3. Հաւատքով աղօթեց

«Վե՛ր ելիր, կե՛ր ու խմե՛, վասն զի անձրեւի ոտնաձայն կայ» (Գ Թագ. 18:41): Իրականութեան մէջ այդ պահին ընդհանրապէս անձրեւ չկար: Երկնքի մէջ նոյնիսկ մէկ ամպ չկար. այն այնպէս էր, ինչպէս վերջին երեքուկէս տարիներու ընթացքին էր: Եղիան պարզապէս գիտեր, որ իր աղօթքը պիտի պատասխանուի, քանի որ այդ ամէնը ներդաշնակ էր Աստուծոյ յայտնած խօսքին: Ասիկա ցոյց տուաւ իր հաւատքը:

4. Անոր աղօթքը անկեղծ էր

Ան խոնարհեցաւ գետնին ու դէմքը դրաւ իր ծունկերուն մէջտեղը: Եղիան խոնարհեցաւ ամենագոր Աստուծոյ առջեւ եւ՝ իր սրտով եւ՝ մարմնով: Մարթին Լութերն ըսած է. «Եթէ աղօթքի նետը պէտք է Երկինք սլանայ, ապա այն պէտք է արձակուի ամբողջութեամբ ծռած աղեղէն»:

5. Անոր աղօթքը յարատեւ էր

Եղիան աղօթեց, իսկ յետոյ ուղարկեց իր ծառային՝ տեսնելու, թէ արդեօք ամպերը կ'երեւին: Վեց անգամ ծառան հանգիստ ծովին նայեցաւ,

որը կը շողար բոցավառ արեւի եւ անամայ երկինքի տակ: 7-րդ անգամ ան տեսաւ փոքրիկ ամպ մը: Եղիայի համար ասիկա բաւական էր: Ան ծառային ըսաւ, որ երթայ եւ Աքաաբին ըսէ, թէ արագ շարժուի, եթէ չ'ուզէր ցեխի մէջ մնալ. «Սինչեւ ասդին անդին դառնալը երկինք ամպերով սեւցաւ եւ հով կար ու սաստիկ անձրեւ եկաւ» (18:45): Այնուհետեւ Եղիան վազեց Աքաաբէն առաջ՝ քառասուն քիլոմէթր մինչեւ Յեզրայէլ: Աղօթքը պատասխանուեցաւ:

Յիշէ՛ք Յակոբոսի ըսածը, որ Եղիան մեզ նման կրքերու ենթակայ մարդ էր: Պատասխանուած աղօթքի բոլոր տարրերը այնպիսին են, որոնք մենք նոյնպէս կրնանք կատարել.

- դարձի՛ եկէք յայտնի մեղքերէն,
- աղօթեցէ՛ք Աստուծոյ կամքին համեմատ,
- Հաւատք ունեցէ՛ք,
- եղէ՛ք եռանդուն եւ յարատեւող:

Անկեղծ աղօթք

Եղիան մարտահրաւեր նետեց ապստամբ ազգին, այնուհետեւ մի կնոջ՝ Յեզաբելի երեսէն վախցած փախչեց: Ան իր կեանքի համար վազեց դէպի հեռաւոր հարաւ՝ Բերսաբէ: Այստեղ թողեց իր ծառային, անապատին մէջ մէկ օրուան ճամբայ գնաց ու գիհիի մը տակ նստաւ եւ սրտանց մեռնիլ ուզեց: Գիհին փոքր ծառ է, որը մեծ տերեւներ չունի, հետեւաբար ծառին տակ նստողին շուքով չի ապահովէր:

«Ալ հերի՛ք է, ո՛վ Տէր, ա՛ն իմ հոգիս, քանզի ես իմ հայրերէս լաւ չեմ»: Հիմա կարո՞ղ էք տեսնել, թէ ինչու Եղիան մեզ նման սովորական մարդ էր: Ան յաղթանակի բլուրի գագաթէն ընկաւ ընկճուածութեան հովիտը: Վերջին օրերը լցուած էր յուզական սթրեսով. վախ եւ ֆիզիկական ուժասպառութիւն կար: Ինչո՞ւ ան յուսահատուեցաւ: «Իմ հայրերէս լաւ չեմ» կը մտածէր: Ան այնքան ալ ուժեղ չէր, որքան կը կարծէր: Այդ տկար պահին Եղիան աղօթեց: Այս աղօթքէն շատ բան կը սորվինք Եղիայի՝ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեան մասին: Կրնա՞ք իր նման աղօթել. «Աստուած, ես կուշտ եմ: Կեանքը պարզապէս չափազանց ցաւոտ եւ բարդ է: Ես կը կարծէի, որ բարձր տեղն եմ, բայց հիմա ամէն ինչ սխալ կ'ընթանայ, պարզապէս առաջ շարժուելու

ճամբայ չկայ»։ Ի՞նչ է ձեր կարծիքը. կը խորհիք թե Աստուած կը զայրանա՞յ ձեզ վրայ, եթէ այսպէս աղօթէք։

Ասիկա կը սորվեցնէ մեզի աղօթքի եւ Աստուծոյ հետ մեր յարաբերութիւններու ամենահիմնական սկզբունքներէն մէկը՝ անկեղծութիւնը։

Անոնք, որոնք կը ճանչնան Աստուծոյ, գիտեն, որ Անոր սէրը ուժգին է։ Անոնք նաեւ գիտեն, որ ան կ'ատէ սուտը։

- Եթէ վատ կը զգաք, Իրեն մի՛ ըսէք որ հոյակապ կը զգաք։ Ըսէ՛ք, որ վատ էք։
- Եթէ մտահոգուած էք, Իրեն մի՛ ըսէք, որ լուռ կը վստահիք Իր հաւատարմութեանը։ Ըսէ՛ք Իրեն, որ անհանգիստ էք։
- Եթէ տխուր էք, Իրեն մի՛ ըսէք, որ ուրախ էք։ Ըսէ՛ք, որ տխուր էք։
- Եթէ կը կարծէք, որ Ան ձեզ թողած է, ըսէ՛ք Իրեն, որ այդպէս կը զգաք։

Ասիկա անկեղծ եւ իսկական աղօթք է։ Պատմէ՛ք Աստուծոյ այն, ինչ կը կատարուի ձեր ներսը։ Ան կրնայ հասկնալ։ Աստուծոյ եւ ձեր միջեւ իւրաքանչիւր կարեւոր գործարք կը սկսի անկեղծութիւնէն։ Երբ ասիկա հասկնաք, դուք կը սկսիք առաջ շարժուիլ։

Յորը Աստուծոյ պատմեց իր զգացումները եւ Աստուած ցոյց տուաւ իրեն առաջ երթալու ճամբան։ Եղիայի յուսահատ աղօթքը դարձաւ կեանքի բոլորովին նոր փուլի սկիզբը։ Աստուած Եղիայի մեռնելու խնդրանքին պատասխանեց վճռական «ոչ»-ով։ Ասիկա աղօթքի հրաշքն է։ Աստուած մեզ չի տար այն ամէնը, ինչ կը խնդրենք Իրմէ, քանի որ յաճախ կը խնդրենք այնպիսի բաներ, որոնց համար յետոյ կը զղջանք։

Աստուած պատասխանեց Եղիայի անկեղծ աղօթքին Իր պատասխանով եւ ոչ թէ Եղիայի ակնկալած պատասխանով։ Աստուած հրեշտակ ուղարկեց Եղիային կերակրելու համար։ Սա հրաշալի ձեւով ցոյց կուտայ, թէ ինչպէս Աստուած նրբանկատօրէն մեզ հետ կը վարուի, երբ կեանքի ցածր տեղերուն մէջ կը գտնուինք։ Եղիան իսկապէս յուսահատ էր։ Ինչպէ՞ս կը վարուի Աստուած Եղիայի հետ։ Երբ Եղիան ընկած վիճակի մէջ էր, Աստուած իրեն ոչ թէ աւելի քիչ ուշադրութիւն դարձուց, այլ աւելի շատ ուշադրութիւն դարձուց։

Որքան ընկած էր Եղիան, այնքան աւելի սէր եւ ուշադրութիւն ստացաւ Աստուծմէ: Եղիայի անկեղծ աղօթքը իր ճանապարհորդութեան մէջ ապաքինման եւ կազդուրման նոր գործընթացի սկիզբ էր: Անկեղծօրէն աղօթելու սկզբունքը կենսական նշանակութիւն ունի, եթէ իսկապէս կը փափաքիք, որ Աստուած պատասխանէ ձեր աղօթքները:

Սորվեցէ՛ք անկեղծութեամբ աղօթել ու լսել Աստուծոյ: Այդպիսով դուք թոյլ կուտաք, որ Աստուած ցոյց տայ ձեզի այն ինչ կը կատարուի ձեր կեանքին մէջ: Այդ մտերիմ հաղորդակցութեան ժամանակ Աստուած կը սկսի վերափոխել ձեզ: Ան ցոյց կուտայ, թէ որքան հիանալի կերպով ամէն բան իր վերահսկողութեան տակ է: Եւ Եղիայի պէս դուք կը բացայայտէք ձեր մասնակցութիւնը այդ հիանալի ծրագրին մէջ:

Սկսէ՛ք այնտեղ, որտեղ կը գտնուիք, բացէ՛ք ձեր սիրտը եւ աղօթեցէ՛ք այնպէս, ինչպէս կաք, եւ ոչ թէ այնպէս, ինչպէս պէտք է ըլլաք: Աղօթքի արկածի մէջ դուք կը բացայայտէք, որ Աստուած շատ աւելի լաւն է, քան երբեւէ պատկերացուցած էիք:

Ռէքս Տիրլալ

Լսող Աստուածը

«Կատուն ձագեր ունեցաւ մեր վարի յարկի հիւրերու սենեակին մահիճին վրայ».- կը պատմէ Հռութ Կրահամ: Այս տեղը անյարմար դատելով, հավաքեցինք նորածին փիսիկները ու զանոնք խավաքարտէ տուփի մը մէջ դնելով, խոհանոցի վառարանին առջև գետեղեցինք, մինչեւ որ աւելի լաւ տեղ մը գտնէինք:

Սակայն մայր կատուն իւրայատուկ խորհուրդ ունէր: Զուարճութեամբ դիտեցինք մինչ ան լուրջութեամբ խոհանոց մտաւ, ետեւի թաթերուն վրայ կայնեցաւ, առջեւի թաթերը տուփին վրայ գետեղեց, հոտուրտալով իր ձագերը: Ապա ճկունութեամբ ցատկեց տուփին մէջ եւ մէկ մէկ փիսիկներուն կռնակէն բռնած ետ տարաւ զանոնք վարի հիւրասենեակի մահիճին վրայ: Միայն մէկ ձագ մնաց տուփին մէջ,

բայց մաման ետ չեկաւ: Կրնայ ըլլալ որ շատ յոգնեցաւ եւ կամ զբաղ էր ձագերը կերակրելով:

Սպասեցինք: Վերջապէս տուփին յատակը մնացած պզտիկ փխիկը շշուկ մը հանեց, գրեթէ անձայն ճիչ մը: Ամմիջապէս, առանց մլաւելու, մայր կատուն եկաւ, իջաւ սնտուկին մէջ եւ ամենափոքր ձագը բերնովը բռնեց ու շալկելով զայն տարաւ հիւրանոց: Երեք դուռ, երկու սենեակ եւ երկու անցք հեռուէն ան լսած էր իր տկար ձագուկին ճիչը, որը նոյնիսկ լման կանչ մը չէր:

Մեր ալ աղօթքները շատ անգամ կատարեալ չեն, եւ ոչ ալ յատուկ օգնութեան աղերսանքներ: Աստուածաշունչին համաձայն, Աստուած մեր հառաչանքներուն, արցունքներուն եւ մրմունջներուն կը պատասխանէ: Նոյնիսկ մեր բաղձանքները կրնան որպէս աղօթք մեկնաբանուիլ:

17-րդ դարու սուրբգրոց աստուածաբան Դան Թրէք՝ Սաղմոս 145-ը մեկնաբանելով կ'ըսէ «Տէրը մօտ է այն ամէնուն որ զինք կը կանչեն, անոնց շունչը կը զգայ, երբ մարած ըլլալով ձայն չեն կրնար հանել» (Սաղ. 145:18):

Ուստի աղօթենք, աղաղակենք կամ մոմոանք, Աստուած մեզ կը լսէ եւ կ'արտօրայ շտապ օգնութեան հասնելու:

«Օրհնեալ ըլլայ Տէրը որ լսեց իմ աղօթքիս ձայնը: Տէրը իմ գորութիւնս ու իմ ասպարս է, իմ սիրտս անոր յուսաց, ու ես օգնութիւն գտայ, ուստի սիրտս ուրախացաւ եւ ես իմ երգովս զանիկա պիտի գովեմ» (Սաղ. 28:6-7):

Քաղուած՝ «Աւետաբեր ձիթենին» գիրքէն



**«Ով Տէր, դուն մեզի ապաւէն եղար ազգէ մինչեւ ազգ:
Լեռներուն ծնանելէն առաջ՝ երկրի եւ աշխարհի ստեղծուելէն
առաջ՝ յաւիտենից մինչեւ յաւիտեանս դուն ես Աստուած»**

Սաղ. 90:1-2

Բարի Հովիւը

**«Ես եմ բարի հովիւը». բարի հովիւը իր կեանքը
ոչխարներուն համար կը դնէ» (Յովհ. 10:11)**

Ասոնք շատ կարեւոր խօսքեր են: Մեր Տէր Յիսուսէն բացի ոչ ոք չէր կրնար ըսել այս խօսքերը: Քրիստոսի այս խօսքերը կը նշանակեն, որ Ան է իմ Բարի Հովիւս: Ան է, ով կ'ուղղէ իմ քայլերս, Ան է իմ Առաջնորդս, իմ Պաշտպանս: ««Ես եմ բարի հովիւը». բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ»: Ինչպիսի՞ հրաշալի Փրկիչ է Ան, որ պատրաստ էր եւ կ'ուզէր Իր կեանքը ինծի համար դնել: Տէր Յիսուսը պարզապէս խոստում չտուաւ. Ան խաչին վրայ մահացաւ իմ մեղքերուս համար, որպէսզի ես ապրիմ: Այսօր ես կ'ապրիմ Քրիստոսի համար՝ այն մեծ յոյսով եւ ուրախութեամբ, որ ուր որ Ան է, ես ալ այնտեղ պիտի ըլլամ: Մենք հիանալի վստահութիւն ունինք: Եթէ Քրիստոսի հանդէպ այս նոյն հաւատքն ունիք, ուրեմն դուք նոյնպէս օրհնուած էք:

Կը յիշեմ մի քանի տարի առաջ հայրենիք կատարած այցս, երբ որոշեցի հովիւ մը գտնել ու անոր երկու հարց ուղղել: Երկար ճանապարհ վարեցինք, բայց չհանդիպեցանք հովիւի մը: Հայաստանի մէջ մնալու օրերս գրեթէ աւարտին հասած էր, բայց փառք կուտամ Տիրոջը, որ վերջին օրերուն մէջ բլուրի մը վրայ հովիւ մը տեսայ: Վարորդին խնդրեցի կանգ առնել, եւ ես սկսեցի այդ բլուրը բարձրանալ: Խեղճ հովիւը զարմացած կը նայէր, թէ ինչու անծանօթ մը կը շտապէ իրեն հետ հանդիպելու: Ես մօտեցայ իրեն ու ըսի. «Աստուածաշունչի մասին երկու հարց ունիմ ձեզի տալու»: Նախ՝ Յիսուսը ըսաւ. «Ես եմ բարի հովիւը»: Ես իրեն հարցունցի. «Դուք բարի՞ հովիւ էք: Ի՞նչը ձեզ բարի հովիւ կը դարձնէ»: Խեղճ մարդը դէմքիս նայեցաւ ու պահ մը մտածեց: Իմ հարցս շատ լուրջ ընդունեց, այնուհետեւ պատասխանեց ըսելով. «Ես բարի հովիւ եմ»: Ես հարցունցի. «Ի՞նչը ձեզ բարի հովիւ կը դարձնէ»: Ան պատասխանեց. «Տեսէ՛ք, այս հօտի բոլոր ոչխարներն իմը չեն: Անոնցմէ ոմանք դրացիիս կը պատկանին, բայց ես բոլորի համար հաւասարապէս հոգ կը տանիմ: Այդ պատճառով կը խորհիմ, թէ բարի հովիւ եմ»: Ես ալ ըսի, թէ ուրախ եմ նման բարի հովիւի մը

հետ հանդիպելու համար, բայց շարունակեցի ըսելով. «Ես երկրորդ հարցում մըն ալ ունիմ: Տէր Յիսուսն ըսած է. «Բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ»: Արդեօ՞ք ասիկա կը նշանակէ, որ Տէրը կ'ուզէ ըսել թէ, բարի հովիւ կոչուելու համար պէտք է ձեր կեանքը ոչխարներուն համար դնէք: Ան պահ մը լուռ մնաց: Լրջօրէն մտածեց, ապա բարձրաձայն ծիծաղեց: Ան ըսաւ. «Ո՛չ, ո՛չ, ես երբեք այս ոչխարներուն համար կեանքս չեմ դնէր»:

Եւ փառք կուտում Տիրոջը ըսելով. «Տէ՛ր Յիսուս, Դուն ես միակ Բարի Հովիւը»: Սիրելի՛ բարեկամ, այս Հովիւը Իր կեանքը դրաւ ձեզի համար, որպէսզի դուք ապրիք: Այս Հովիւը Իր արիւնը թափեց մեղաւոր տղամարդկանց եւ կանանց համար: Երբ կը մերժէք Տէր Յիսուսին, դուք կը մերժէք Անոր կատարած հրաշալի աշխատանքը, կը մերժէք Անոր թափած արիւնը եւ այդպէս ընելով դուք կ'ըսէք, որ Անոր քաւարար արիւնը չի կրնար մաքրել ձեզ: Սիրելի՛ բարեկամ, եթէ այդ որոշումը կ'այացնէք, դուք կը մեռնիք ձեր մեղքերուն մէջ, բայց եթէ ճշմարտութիւնը ընդունիք եւ Տէր Յիսուսին մօտ գալով ըսէք. «Տէ՛ր Յիսուս, Դո՛ւն ես իմ Հովիւս, ես միայն Քեզի պիտի հետեւիմ ու միայն Քու ձայնդ պիտի լսեմ ու միայն Քու ճամբաներուդ մէջ պիտի քալեմ եւ միայն Քու արօտավայրերուդ մէջ պիտի արածեմ», ապա պիտի ճաշակէք Անոր փրկութիւնը եւ պիտի ունենաք Քրիստոսի հետ յաւիտենական կեանք: Դուք ձեր սրտին մէջ պիտի ունենաք Տէր Յիսուսի տուած ուրախութիւնը, դուք պիտի ժառանգէք փրկութեան ուրախութիւնը:

Եկէ՛ք Բարի Հովիւին մօտ: Եկէ՛ք ու նստէ՛ք Անոր ոտքերուն մօտ ու ճաշակէ՛ք Քրիստոսի սէրը: Թող Տէրը օրհնէ ձեզ եւ օգնէ մեզ բոլորիս հասկնալու, թէ որքա՛ն մեծ, որքա՛ն լայն եւ խորն է Տիրոջ սէրը մեր նկատմամբ:

Հ. Գ.